



ՊԱՏՄԱ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի իսկական անդամ)

ՀԱՅԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

(Բառաբանական)



Իզվաբանական հանրածանոթ երևույթ է այն, որ նվաճող ազգի լեզուն ազդում է նվաճված ազգի լեզվի վրա ավելի կամ պակաս չափով, նայած նվաճող ազգի թվական առավելության, ուժի և մանավանդ կուլտուրական մակարդակի: Այդ երևույթը կարող է այնքան առաջանալ, որ մինչև իսկ կարող է կլանել նվաճված ազգի լեզուն: Մեր շրջապատից մի օրինակ վերցնելու համար հիշենք արաբները, որ 7-րդ դարում դուրս գալով Արաբիայից, նվաճեց Արևելքն ու Արևմուտքը և ջնջեց Եգիպտոսի, Սուդանի, Պաղեստինի, Ասորիքի և Միջագետքի տեղական լեզուները:

Բայց կա նաև սրա հակառակ երևույթը: Եթե նվաճող ազգը, չնայած իր զորության, կրթական տեսակետից ավելի ցածր է քան նվաճված ազգը, կարող է ավելի կամ պակաս չափով ազդվել նվաճյալ ազգի լեզվից: Այսպես, հռոմայեցիք տիրեցին հույներին, բայց շատ կողմերով ավելի քաղաքակիրթ հույներից, ոչ միայն փոխ առին նրանց գի-

տությունը, այլև բազմաթիվ բառեր: Նմանապես թյուրքերը, թեև նվաճեցին հույներին, բայց իրենք էլ որոշ չափով ազդվեցին հունարեն լեզվից: Կոստանդնուպոլսի գրական և ժողովրդական թյուրքերենում կան մի խումբ հունարեն բառեր, ինչպես արհեստների, հատկապես նավարկության, ձկների տեսակների, նույնիսկ մրգերի անուններ, որոնք փոխ են առնված հունարենից: Հիշենք ձկներից üsgümrü, stavrit, ülüfer, levrek, palamud, čiroz, թռչուններից՝ ispinoz, պտուղներից՝ keşane, muşmula, kiraz և այլն: Նույնիսկ թյուրքական պաշտոնեության նշանավոր efendi բառը հունարենից է փոխառյալ:

Թյուրքերենը հայերենից էլ փոխառություններ ունի: Բառարանում գտնում ենք xaç «խաչ», xaç vari «խաչաձև», yağ «յուղ», dəp, կարագ», çap «թնդանոթի տրամագիծը», örünek «օրինակ, նմուշ, մանավանդ ձեռագործի», petak «սեղանի մեղվի» և այլն, իսկ Փոքր Ասիայի թյուրքական բարբառներում գտնված հայերեն փոխառությունների թիվը հասնում է 250-ի:

Հայերենի մեջ պարսկերենից փոխառյալ բառերի թիվը մեծ է: Սակայն պարսկերենն էլ փոխառություններ ունի հայերենից, թեև շատ փոքր քանակությամբ: Իմ կարծիքով այդ փոխառությունները հետևյալներն են.

1. Ակադեմիկոս Աճառյանի այս հոդվածը գտնվում էր տպագրության ընթացքի մեջ, երբ անողորմ մահը կտրեց նրա կյանքի թելը: Հաջորդ համարով մենք կանդրադառնանք մեծ հայագետի և լեզվաբանի կյանքին և բեղուն գործունեությանը: ԽՄՐ.:

ա) Աղիւս

Աղիւս բառը շատ հին է մեր մեջ. գործածված է Սուրբ Գրքում: Երուսաղեմի Համարաբարձը տալիս է 12 վկայություն այս բառով, որոնց վրա ավելացնում է նաև 4 ածանց բառ՝ աղիւսադունն, աղիւսարկ, աղիւսաթիւ, աղիւսարկութիւն:

Աղյուսը լինում է երկու տեսակ. մեկը այն, որ շաղախելուց և ձև տալուց հետո դնում են արևի տակ և շորացնում, մյուսն էլ այն, որ շաղախելուց և ձև տալուց հետո գցում (արկանում) փուտը և եփում, մինչև ստանա բաց կարմիր գույն: Առաջինը կոչվում է «հում աղյուս», երկրորդը՝ «եփած կամ թրծուն աղյուս»:

Հայտնի չէ, թե մեր աղյուսը այս երկուսից ո՞րն էր. կարող էր ընդհանուր բառ լինել, առանց պատրաստության տեսակի խտրության: Բայց ինչպես մի վկայություն ցույց է տալիս, երևի աղյուսը թրծուն էր. «Նկայք արկացուք աղիւս, և թրծեսցուք զայն հրով: Եւ եղև նոցա աղիւսն ի տեղի քարի, և կուար ի տեղի շաղախոյ» (Մենդ., ԺԱ 9):

Աղիւսի հոմանիշն է ագուտ, որ ավելի քիչ գործածական է մեր մեջ. ունենք ընդամենը 2 վկայություն. մեկը՝ Վարդ հարանց, հատոր Բ, էջ 328. «Աղիւս թրծեալն հրով ագուտ՝ կացցէ և ի ջրի լաւ քան զքար»: Այս վկայության վրա Վարդանյանը ավելացնում է նաև մի երրորդ վկայություն, որ 5-րդ դարից է. «Որպէս ագուտ հարկանել զգլուխ նորա»:

Եթե աղիւսը թրծուն տեսակն էր, սպասելի էր, որ ագուտը լիներ հում տեսակը. բայց վերի վկայությունը ցույց է տալիս, որ երկու բառերն էլ երկու տեսակի համար գործածական էին:

Ագուտ բառը փոխառություն է ասորեստանյան լեզվից, որ է agutu. այս բառը մտել է նաև պարսկերենի մեջ āgūr ձևով, ինչպես և կովկասյան զանազան լեզուների մեջ: Իսկ աղիւս բառի ծագումը հայտնի չէ. հայերենից փոխառվել է վրացերեն alizi, որ ցույց է տալիս թե ղ ձայնը իրոք 1 էր հնչվում: Նույն բառը ունենք նաև պարսկերեն āxīz ձևով և նույն նշանակությամբ, ինչպես և «այլուսի կաղապար» իմաստով: Պարսկերեն āxīz բառի ու ծագումն է հայտնի, ոչ էլ գործածության թվականը: Horn իր բառարանում չի հիշատակում այս բառը. Գեորգ Դաիրն էլ որևէ վկայություն չի բերում, որպեսզի բառի գործածության թվականը հայտնվեր: Բայց ինչ էլ որ լինի, ավելի հին չափսի լինի քան 10-րդ դարը, որովհետև պահլավերեն ձևը հայտնի չէ: Բայց մեզ լավ առաջնորդ է հանդիսանում պարսկերեն x ձայնը, որ դրված է հայերեն ղ-ի դեմ: Եթե բառը հին գործածություն ունեցած լիներ, անշուշտ

*ālīz ձևը պիտի ունենար, ինչպես և վրացերենը: Բայց քանի որ ունի x, ուստի ամենաշատը 9-րդ դարից է, որովհետև ըստ մեր քննության հայերեն ղ տառի խ հնչումը 9-րդ դարից է սկսվում:

Ձայնաբանական օրենքների համաձայն անհնարին է, որ x-ից առաջանա l, թեև հայերենի համար շատ սովորական երևույթ է ուշ շրջանում խ դարձնել դ: Որովհետև աղիւս բառը մեր մեջ արդեն 5-րդ դարից ավանդված է և այն էլ l ձևով, իսկ պարսկերենը ունի միայն x, ուստի անհնարին է, որ հայերենը ծագեր պարսկերենից, մինչդեռ պարսիկ āxīz բառի փոխառությունը հայերենից՝ շատ բնական և կանոնավոր է ձայնական օրենքների համաձայն:

բ) Բարեկենդան

Այսպես է կոչվում ամեն մի շաբաթապահին նախորդող ուռյաց օրը: Բայց նշանավոր է Բուն Բարեկենդանը, որ Մեծ կամ Քառասնորդական պահոց նախորդող կիրակին է: Այդ օրը հավատացյալների մեծագույն ուրախության և ցնծության օրն է: Ամբողջ տարվա մեջ նրանք այնքան ուրախ չեն անցկացնում, որքան այդ օրը: Ձատիկն անգամ չի հասնում նրան: Կարծես վրեժը հանելու համար գալի՞ք 7 շաբաթ պասի, այդ օրը հավատացյալները մեջտեղ են դուրս բերում ուտելիքների իրենց ամբողջ պաշարը և ուտելով ու խմելով ամբողջ օրը անցկացնում, այնքան որ, իբրև առած ասվում է. «Բարեկենդան չէ, փորի կենդան չէ»:

Այդ օրը թույլատրվում է նաև ցուցադրել ամեն տեսակի հասարակական խեղճատակություններ, նույնիսկ դիմակով ծալոված: Սա եվրոպացոց հայտնի կառնավալն է, որ գոյություն է ունեցել մեզ մոտ եվրոպականից շատ առաջ: Արտվանը իր «Վերք Հայաստանի» գրքի սկզբում տալիս է գյուղական բարեկենդանի ընդարձակ նկարագիրը 19-րդ դարի սկզբում:

Այդ օրը նաև Աբեղաթող է, այսինքն ճգնազգայաց արեղաներն անգամ թողնում են կրոնական ժողկալությունը և ապրում են աշխարհիկ զրոսանքով:

Բարեկենդանին հաջորդող երկուշաբթի օրը կոչվում է բալիլախոբան. այդ օրվանից սկսվում է պապը և ավանդապահ հայ ժողովուրդը ձեռք է քաշում ամեն տեսակ կենդանական ուտելիքներից (միս, յուղ, ձու, կաթ, մածուն, սեր, ձկնկիթ, ձուկ և այլն): Այս բոլորը արգելված է մինչև թաթախման երկուն: Հավատացյալ մարդու տանը այլևս այդպիսի որևէ ուտելիք չպիտի գտնվի: Կոստանդնուպոլսում մահմեդական գնչուները երկուշաբթի առավոտ դուրս են գալիս

կանչելով. «Եմեքերեք սյուփյուրկե՛» («ուտե-
լիքներին ցախավե՛»), և բոլորը իրենց տան
ավելորդ կենդանական ուտելիքները տալիս
են նրանց, առանձին մաքրելու համար:

Բարեկենդան բառը հին գործածություն
չունի. չի ավանդված 5-րդ դարից, բայց
նրանից ունենք բարեկենդանանալ, բարե-
կենդանացուցանել, բարեկենդանի և բարե-
կենդանություն. սրանցից վերջինը գործած-
ված է արդեն Սուրբ Գրքում. Համաբարբառը
տալիս է 6 վկայություն, որոնցից հիշենք
Սաղմոս ԻԹ 7. «Ես ասացի ի բարեկենդա-
նութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւի-
տեան»: Այդ վկայության գոյությունը ոչ
միայն հաստատում է բառի գոյությունը
5-րդ դարի առաջին կիսում, այլև ճշտում է
բառի ստուգաբանությունը: Այլևս ոչ մի
կասկած չկա, որ բարեկենդան բառը կազմ-
ված է բարի-+կենդանի բառերից և հարա-
գատ հայերեն բառ է:

Պարսկերենում կա bargandān, որ գրվում
է նաև bargandān և որ Գեորգ Դպրի բա-
ռարանում բացատրվում է հետևյալ ձևով.
«Տօն ուրախութեան և ցնծութեան և զբօսա-
նաց, որ լինի յելս Շապան ամսեանն»: Այս
բառը հայերենից է փոխառյալ պարսկերե-
նում:

Բայց ի՞նչ գործ ունի քրիստոնեական մի
բառ պարսկերենի մեջ:

Պարսիկ հավատացյալ ժողովուրդը ամ-
բողջ տարին սգում, ողորում է Այիե, Հասանի
և Հյուսեինի նահատակության հիշատակով:
Ամեն մի մուլա կամ դերվիշ, դերասանների
մի շրջիկ խմբի գլուխն անցած, ման է գա-
լիս գլուխից գլուղ է գլուղի հոսպարակում
հավաքելով գլուղացի ժողովուրդին, ողբերգա-
կան սգահանգեսներ է ներկայացնում նրանց
առաջ: Ժողովուրդը հողի վրա պալած, գլու-
խը ձեռքերի մեջ ծածկած, լաց լինում,
սգում, հեկեկում է՝ վճառելով մի քանի շա-
հի: Աղպիսի տեսարանները վերջ չունեն
պարսկաստանում, մինչև Մուհառեմի 10-ը,
որ ուլուխ ճղելու օրն է:

Հայերի բարեկենդանը, իր ցնծության և
ուրախության հանդեսներով, նույնիսկ դի-
մակահանդեսներով, նախանձն է շաբթի
սգավոտ պարսիկների, որոնք առնե տառե-
կան մի օր ուրախ անցկացնելու համար
փոխ են առել հայերից աղ տոնն ու նրա
անունը: — Հայոց բարեկենդանը մեծ առ-
նոց ստո օրերի նախորդող օրն է. մահմե-
դականների շաբան ամսի մերթին օրն էլ
ամբողջ ուսմագան ամսի խեստ ծոմապա-
հության նախորդող օրն է: Ալափսով բա-
րեկենդան և bargandān իմաստով բոլոր-
վին նույնանում են:

Բառի ձևի կողմից ոչ մի տարբերություն
չկա: Հայ ժողովրդի մեջ բարեկենդան բառը

հնչվում է բարեկենդան ձևով. բառի առաջին
բաղաձայնը, ինչպես և վերջին վանկի դ
ձայնը բոլորովին նույն են և ներկայացնում
են արևելյան ճիշտ արտասանությունը: Երկ-
րորդ ձայնավոր է ձայնը ջնջված է երկուսի
մեջ էլ: Պարսկերեն ց տառը համապատաս-
խանում է հայերեն գ-ին (օրինակ čirāğ =
ճրագ, tīg = տեղ, nufāğ = նուագ): Ուստի
պետք է ենթադրել, որ պարսիկ բառը փոխ է
առնված ժողովրդական բարբենդան ձևից:
Իսկ գ-ով գրչությունը համապատասխանում
է արդի պարսկերենի դ հնչման (արդի պար-
սիկները սրաբական գ տառը հնչում են ց
ինչպես āğā):

Հայերեն բարեկենդան բառի ծագման մա-
սին ոչ մի կասկած չկա, իսկ պարսկերեն
bargandān ձևը ոչ մի բացատրության չի
դիմանում: Եթե պարսիկները մտածած լի-
նեին ժողովրդական ստուգաբանությամբ ց
կամ գ տառը դարձնել x և ասեին *bar-
xandān, անշուշտ ամեն ինչ կփոխվեր և բո-
լոր հալ լեզվաբանները աղ հայ բառը
կմեկնեին պարսկերեն xandān «ուրախ, ծի-
ծառելի» բառից:

Ահա թե ինչո՞ւ և ինչպե՞ս հայերեն մի
բառ մտավ պարսկերենի մեջ: Այս բառը
չկա հին գրադարանական կրոնի մեջ, ուստի
և գրադարանական լեզվի ու ստականության
մեջ: Q ձայնը ցույց է տալիս, որ բառը
օտար է: Q տառով սովորած բառերը մեծա-
գույն մասամբ արաբերեն են, բայց այս
բառը չի ետրոդ արաբերեն լինել, 6 բաղա-
ձայն ունենալու պատճառով (հատուկ է, որ
բնիկ արաբերեն բառերը ունեն ընդհանրա-
պես 3 բաղաձայն): Բայց թյուրքերեն կա-
րող է լինել, ինչպես ունե՞ն պարսկերենում
qōšūn «ղորաբանակ» և qāšūq «գալա»:

գ) Գ ու տ ա ն

Գ ու տ ա ն բառը համարվում է պարսկերեն
բառից փոխառություն: Այս բառը պարսիկ-
ները կարդում են kūšan, որ ըստ Գեորգ
Դպրի պարսկերեն-հայերեն բառարանի (էջ
674բ), «1. է անուն սրնահարի միոջ, որ էր
ի ժամանակ միոյն ի թագաւորացն վաղոն-
ջականաց. 2. է տեսակ իմն յերդեցողու-
թենէ. 3. է անուն աւանի միոջ ի կցորդացն
Մասէնտէրանու»:

Հյուսիսային իր Arm. Gramm. աշխատու-
թյան մեջ (էջ 131) չի ընդունում այս եր-
կու բառերի համեմատությունը, ոտով հետև
պարսկերեն k և հայերեն գ տարբեր ձայ-
ներ են:

Սակայն պարսկերեն k տառը կարելի է
կարդալ երկու ձևով՝ g և k: Քանի որ հա-
յերեն ունենք գուսան ձև, որ և համատա-
վում է վրացերեն მგოსანი մգոսանի «եր-

գող, երաժիշտ, սրնգահար, ողբասաց» բառով, ուստի կասկած չկա, որ հիշյալ պարսկերեն բառը պետք է կարդալ *gōsān* կամ *gūsān*, և ոչ բնավ *kōsān*: Ըստ այսմ *Stackelberg ZDMG 48, 495* առաջարկել է սրբագրել պարսիկ բառի հնչյունը և կարդալ *g* նախաձայնով, որով հայերեն, վրացերեն և պարսկերեն բառերի միավայրան կապը հաստատվում և ամրանում է (այս մասին տե՛ս նաև իմ Արմատական բառարանում):

Բայց պարսկերեն *gōsān* (ինչպես *kōsān*) բառը ոչ մի բացատրություն չունի. պահյալներեն բառարանումն էլ ավանդված չէ. ո՛չ *Horn* հիշում է այն՝ իր Պարսկերենի ստուգաբանական բառարանում, ո՛չ էլ *Hübschmann* իր *Persische Studien* աշխատության մեջ, որ *Horn*-ի ստուգաբանական բառարանի քննադատությունը և հավելվածն է: Կա պարսկերեն *kōs* «մեծ թմբուկ», որ և իբրև արարերեն բառ ունի Կամուս, թրք. թրգմ. բ. 286. Բայց անշուշտ իրանյան է, որովհետև կա նաև նորագյուտ սոգդյաներեն *kws* «թմբուկ»:— Հյուսիսային, 264: (Այս բառի հետ նույն է հայերեն գոս, գրված նաև *foq* «մեծ թմբուկ», վկայված Ն. Շնորհալու «Ողբ Նդեհիոյ» գրքում): Բայց այս բառն էլ չի կարող մեկնել պարսկերեն *kōsān* բառը ձևվերջնավանկի պատճառով: Նույնիսկ պարսիկ բառի հնչյունն անորոշությունը (ց նախաձայնո՞վ թե *k*) նշան է, որ այդ բառը բնիկ պարսկերեն չէ:

Ընթացողում եմ, որ դա հայերենից փոխառյալ բառ է և ծագում է գովասան բառից: Գովասան, ճիշտ ինչպես վիպասան և ճարտասան, հայերենի հնագույն բառերի շարքից է, իր -ան դերբայակերտ մասնիկով և կազմված է գով-ել արմատից, իբրև ճշգրիտ ասող: Այս բառը՝ վիպասան բառի հետ միասին, ներկայացնում է նաև հին հայոց երգիչների մի տեսակը, որ պարապում էր իշխանների և թագավորների վրա գովքեր ասելով ու երգելով: Նրանց համբավը այնպես էր տարածվել, որ հասել էր նաև Պարսկաստան՝ մեր հարևան երկիրը:

Վիպասանների (գովասանների) օրրանը համարվում է Գողթն գավառը (այժմ Ագուլիս): Այդտեղից նրանք դուրս գալով շրջում էին ամբողջ Հայաստանը և իրենց երգերով ուրախացնում ժողովրդին: Ինչո՞ւ չենթադրել, որ նրանք գնում էին նաև Մարաստան ու Պարսկաստան:

Հարց է, թե գովասան բառը կարո՞ղ էր դառնալ պարսկերեն *gōsān* կամ *gūsān*. այս մասին առարկություն տեղիք չկա, որովհետև *ōvā* կամ *ūvā* ձևի վերածումը *ō* կամ *ū* ձևին՝ անսովոր չէ պարսկերենում: Այսօր էլ պարսկերեն *tūvānam* կամ *tōvānam* «կարող եմ» բայը դարձել է ժողովրդ-

դական լեզվում *tōnām* կամ *tūnām*: Ըստ այսմ հայերեն գուսան՝ պարսկերենից ետ առնված փոխառություն է:

Բայց նույնիսկ հայերենի ամենահին բառերի մեջ մենք գտնում ենք *v-*ի այսպիսի ջնջման օրինակներ: Հայերեն *նոր* և *սոր* «փոս» բառերը ծագում են հնագույն **no*լոր, *so*լոր ձևերից: Հայերեն աղբիւր, եղջիւր, ալիւր բառերի սեռական անկանոն աղբեր, եղջեր, ալբեր ձևերը շատ կանոնավոր ձևով բացատրվում են այսպես: Դրանց հին ուղղական ձևն է աղբեր, եղջեր, ալբեր, որոնք սեռականում դարձան *աղբեւեր, *եղջեւեր, *ալբեւեր և հետո *v-*ի ջնջումով՝ աղբեր, եղջեր, ալբեր: Նույնիսկ զիտ բառի անկանոն սեռական գեղջ ձևը պարտական ենք այս կանոնին: Բառի հին ձևն է ուղջ. գեղջ, սեռ. *գեւեղ, որ դարձավ հետո *գեղ, և որովհետև այս բառը այս ձևի տակ շփոթվում էր գեղ «գեղեցկություն» բառի հետ, ուստի ավելացրին *v* մասնիկը, որ սեռականի նշան է (հմմտ. կնոջ):— Ըստ այսմ գովասան բառը դարձած պիտի լիներ վ-ի ջնջումով՝ գուսան և այս ձևի տակ անցած պարսկերենին:

Երկրորդ հարցն էլ այն է, թե կարո՞ղ էր հայ երաժշտությունը Պարսկաստան անցած լինել կամ հաստատապես նրա մի տեսակը ընդունված լիներ նաև Պարսկաստանում:

Պարսկական երաժշտությունը շատ հարուստ է: Բառարանում կան բազմաթիվ բառեր, որոնք ներկայացնում են բազմատեսակ եղանակի անուններ: Կան եղանակներ էլ, որոնք իրենց անունը ստացել են այսինչ կամ այնինչ երկրից ու գավառից: Պարսկերեն *gōsān* բառն էլ համարվում է մի նշանավոր սրնգահարի անունից, որ կարող էր հայ եղած լինել և կոչել իրեն պարզապես «գովասան»:

Ես 7 տարի մնացել եմ Պարսկաստանում. պիտի խոստովանեմ, որ երաժշտությունը շտեմս այնպես ծաղկած վիճակի մեջ, ինչպիսի սպասելի էր: Կովկասում և հատկապես Ղարաբաղում շատ ավելի ծաղկած է պարսկական երաժշտությունը: Եվ 1919 թվականին, երբ Ղարաբաղից հայ երաժիշտների մի խմբակ, 5 հոգուց բաղկացած, եկավ Թեհրան մայրաքաղաքը, ամենամեծ ընդունելություն գտավ և նույնիսկ արքայական պալատը բարձրացավ:

Հիշեմ վերջապես մի առած, որ տարածված է Կովկասում.

«Էրմենի օխույանըն դիլինի քէսէսէն,
Մուլիման շալանըն էլինի քէսէսէն»:
(«Հայ երգողի լեզուն կտրես,
Իսլամ ածողի ձեռքը կտրես»):

Այս առաժը ցույց է տալիս, որ հայը իբրև երգիչ արժանավոր բարձրության վրա կանգնած չէ (անշուշտ ո՛չ թե ձայնի, այլ՝ ո՛չ հարազատ և մաքուր արտասանության պատճառով), իսկ նվագելու մեջ նա շատ ավելի գերազանց է, քան իսլամ եղբայրակից երաժիշտները:

դ) Խաչ

Տարբեր կրոններ իրարից կրոնական բաներ փոխ չեն առնում: Բայց երբ հարկ է լինում տարբեր մի կրոնի այս կամ այն կրոնական բառը հիշել, ստիպված են փոխառություն կատարել իրենց մոտ գտնված մի ժողովրդի լեզվից: Այս կարգի բաներից են տէրտէր, քանակայ, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս և ամենից ավելի խաչ:— Հայտնի է, որ մահմեդականները քրիստոնյաներին կոչում են խաչապաշտ:

Խաչ բառը հնդկարուսական ծագում ունի. նրա նախնական նշանակությունն է փայտ, որից ունենք նաև խեչակ «փայտե նեցուկ» և խոչընդոտն, խոչընդակն, որոնց բուն իմաստն է «փայտի կտոր, որ ոտքին կամ աչքին է դիպում»: «Այսպես է նաև ուրիշ քրիստոնյա ազգերի լեզվի մեջ, ինչպես հունարեն σταυρός «1. ցից. 2. մահապարտի ցից. 3. խաչ», σταυρός «սրածայր փայտ, ցից, հետնաբար՝ խաչ», պարսկերեն dārū «ծառ, փայտ», Մանիքեական գրվածքներում «խաչ», որից էլ badar kurdan «խաչել», ասորերեն quysā «ծառ, փայտ, խաչ», այսպես նաև ասորերեն salipā, նախապես «փայտի կտոր» և ապա «խաչ», որից էլ փոխառյալ են արաբերեն sālib «խաչ» և պարսկերեն čelipā «խաչ»: Հայերեն էլ ասվում է «փայտ խաչի» կամ «խաչափայտ»:

Պարսկերենը հայերենից փոխ է առել այս բառը վաղ ժամանակներում, որովհետև հիշված է նաև պահլավերենում (տե՛ս Արմատական բառարան, հատոր Գ, էջ 386), իսկ ավելի նոր պարսկերենում ունենք xāj և xāč ձևերը, որից էլ xāčperest «խաչապաշտ», ինչպես կա և čelipāperest (նույն իմաստով) և xāčasürān «խաչալուսայ»: Թյուրքերենն էլ փոխ է ստել այս բառը հայերենից xāč կամ hač ձևով, որից էլ xāčvari «խաչաձև» և xāčperest «խաչապաշտ, քրիստոնյա»:

ե) Շնքաղեղ

Հայ տնտեսության մեջ նշանավոր է ապուխտը: Աշնան ժամանակ, երբ միայն առատ է և շուտ չի հոտում, հայերը սովորություն ունեն տավարը մորթելով ոսկորներից բաժանել և մաքուր միսը երկար շերտերով կտրելով աղի և համեմունքի մեջ օրերով պահել և ապա օդի մեջ կախելով չորացնել: Կովկասի հայոց մեջ այս սովորությունը չկա, ինչպես չկա նաև ամբողջ Պարսկաստանում: Ապուխտի պատրաստության ամենանշանավոր վայրն է Փոքր Ասիայի Կեսարիա քաղաքը, որտեղի ապուխտը ամենից համեղն է լինում: Երկրորդ նշանավոր վայրն է Կարինը (էրզրում), ուր պատրաստված ապուխտը քանակի կողմից գերազանցում է Կեսարիայից, բայց նրա չափ համեղ չի լինում:

Արևմտյան Հայաստանի բնակիչների մոտ ամեն մի քաղաքում, տնային միջոցներով, ամեն տուն պատրաստում է ապուխտի պաշարը, ամբողջ ձմեռը գործածելու համար: Ապուխտի պատրաստությունը ծանոթ է նաև Ղրիմում, և այստեղից դաղթած Նոր-Նախիջևանի հայոց մեջ: Այս վերջին քաղաքում չկար մի հայ տուն, ուր մեծ քանակությամբ ապուխտ չպատրաստեին, առտնին գործածության համար:

Կարինի և Ղրիմի ապուխտի պատրաստության տարբերությունն այն է, որ առաջինում շինում են տավարի մսից, իսկ երկրորդում՝ ոչխարի մսից: Առաջինը դժվարին և երկար աշխատանքի կարոտ է և ինչպես ասացի, ոսկոր չունի. իսկ երկրորդը շատ ավելի արագ և հեշտ է պատրաստվում, նույնիսկ առանց ոսկորների հանելու:

Կարինում ապուխտը այնքան մեծ քանակությամբ է պատրաստվում, որ հարյուրավոր ձիեր բարձած ապուխտը քարավաններով գնում է Տրապիզոն, այնտեղից Կոստանդնուպոլիս և Կոստանդնուպոլսի վրայով մինչև Հունաստան, Բուլղարիա և Եգիպտոս:

Ղրիմում պատրաստած ապուխտը կար նաև Լեհաստանում, լեհահայ դաղութի մեջ. և անշուշտ նրանց միջոցով անցել էր նաև լեհերին: Լեհերեն բառարանի առաջին երեսում կա ապուխտ բառը abucht ձևով (տե՛ս Արմատական բառարան, հատոր Ա, էջ 453), որի մեջ b ձայնի գոյությունը նշան է, թե լեհերեն բառը փոխ է առնված արևմտահայ մի բարբառից:

Ինչպես Պարսկաստանում, նույնպես և Կովկասում ապուխտը անծանոթ է. միայն Կարինից դաղթած հայությունը (Ախալցխա, Ախալքալաք և Լենինական) շարունակում է դեռ ապուխտի գործածությունը:

Ապուխտ բառը անպայման իրանական փոխառություն է և ենթադրում է պահլավե-

րեն *apuxt «անեփ, չեփած», որ կազմված է a բացասականով puxt «եփած» բառից, հմմտ. պահլավերեն hu-puxt «լավ եփված, քաջեփ», պարսկերեն puxtan «եփել», puxta «եփված»:

Հարմանալին այն է, որ ապուխտ բառը թեև իրանական փոխառություն է, բայց ոչ միայն այդ բառը գոյություն չունի պարսկերենում, այլև ապուխտի գործածությունը իսլամ անծանոթ է Պարսկաստանում: Տաճկաստանում էլ ապուխտ բառը միայն գրական է, իսկ ժողովուրդը ամեն տեղ գործածում է թյուրքերեն basturma (ժողովրդական pasdarma), որ կազմված է bas «կոխել» արմատից, ըստ որում միսը պահում են երկար ժամանակ քարե ծանրոցների տակ: Գրաբարում ապուխտ բառը շատ հին է և գտնում ենք Սուրբ Գրքում: «... Ապխտեցին իրենաց ապուխտս շուրջ զբանակամ» (Թուոց, ԺԱ 32), իսկ այսօր ապուխտ բառը պահված է միայն Նոր-Սախիջևանի բարբառում:

Ապուխտի պատրաստության մեջ ամենակարևոր դերը կատարում է շաման կոչված բույսը: Այս բառը օտար է. սկզբնական աղբյուրը սեմական է համարվում. ամենահին ձևն է ասորական kamūnu, գտնում ենք նաև բազմաթիվ սեմական լեզուների մեջ, բայց նրանք բոլորն էլ ունենալով K նախաձայնը, չեն կարող մեր բառի մայրը լինել: Հայերենում շաման բառը ավանդված է արդեն 5-րդ դարից. հմմտ. Սատթ., ԻԿ 23. «... Տասնորդէք զանառուկս, զսամիթ և զշաման...»: Խեև իրանականում այս բառը չկա (չունի Գեորգ Դպիրը), բայց ունենք թյուրքերեն čemen հոմանիշը, որ տարածված է ամբողջ Արևելքում: Բայց որովհետև շաման գործածված է 5-րդ դարից, ուստի չի կարող թյուրքերեն լինել, այլ հայ ձևի հետ միասին ենթադրել է տալիս իրանական čaman ձևը:

Չաման բույսը աճում է Փոքր Ասիայում և Հայաստանի արևելյան նահանգներում. Կեսարիան և Կարինը չէին կարող ապուխտը պատրաստել այնքան մեծ քանակությամբ առանց շամանի: Արդի Պարսկաստանում նույնպես աճում է շամանը, բայց կրում է այլաձև անուն. Թավրիզի հայերը կոչում են շանբալա, որ ժողովրդական ստուգաբանության արդյունք է, իբր թե շան ձագ: Նույն քաղաքի պարսիկները կոչում են čember-lüle, որ նույնպես ժողովրդական ստուգաբանություն արդյունք է և նշանակում է իբր թե «շրջանակ խողովակ»: Բուն բառն է պարսկերեն šenbelile կամ šenbelil, որ Գեորգ Դպիրի բառարանը մեկնում է «բոյս ինչ բազմաճիւղ և սպիտակածաղիկ», թյուրքերեն boy toxuma, արաբերեն ħulba» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա

113): Այս անունով Թավրիզի թյուրքերը հասկանում են մի տեսակ դաշտային խոտաբույս, որ ոչխարը շատ է սիրում ուտել. տալիս է ոսպի նման, բայց անկանոն եզերքներով շատ կարծր մի սերմ, որ պարսիկները ծեծելով, յուղի մեջ տապակած ուտում են: Այս սերմը Կարնո շամանն է. առատությամբ աճում է Ղարաբաղում, որ մեր հին Փայտակարան նահանգն է (տե՛ս Արմատական բառարան, հատոր Ա, էջ 930):

Երևանում, ինչպես ապուխտը, նույնպես և շամանը, անծանոթ էր: Ներգաղթող հայերը գտան, որ այդ բույսը աճում է Երևանից մինչև էջմիածին տանող հարթության մեջ՝ վայրի վիճակում: Իսկույն սկսեցին գործադրության դնել և անցան ապուխտի պատրաստության: Այժմ ոչ միայն ապուխտը տարածվել է Երևանում, այլև շամանի բույսը մշակում են Նոր-Բյուրժանիայի տնամերձ հողամասերում:

Պարսկերեն šenbelile բառը և մանավանդ šenbelil բառը կարելի չէ մեկնել ոչ պարսկերենով և ոչ էլ թյուրքերենով. այդ են ցույց տալիս զանազան ժողովրդական ստուգաբանությունները: Կարծում եմ, որ հարմարագույն ստուգաբանությունը տված կլինենք, եթե ենթադրենք հայերեն *շնբաղեղ բառը, որից փոխառյալ դնել պարսիկ ձևը. — դ տառի փոխարեն պարսկերեն 1 նշան է հնություն: — Ապուխտի հին ժամանակ գոյությունը և շաման բույսի գոյությունը Հայաստանում թույլ են տալիս մեզ ենթադրել այդպիսի մի բառ:

Իբր հավելված այս բաժնին, դնում եմ բժշկական մի քննության արդյունքը ապուխտի մասին:

Հայտնի մանրէաբան բժիշկ Աբգար Իսահակյանը հարցրեց ինձ մի օր (20 տարի առաջ էր), թե ինչու Տաճկաստանում այդքան շատ տարածված է ապուխտի գործածությունը, բայց մարդիկ այս կամ այն ստամոքսային հիվանդությամբ չեն տառապում: Փորձի համար գնացինք շուկա և մի քիչ թարմ ոչխարի միս առնելով բերինք իր տունը, մասնավոր աշխատանոցում (լաբորատորիա), ուր բժիշկը վարակեց միսը զանազան մանրէներով (տիֆ, խոլերա, չու՛մա): Ես այդ վարակված միսը Նոր-Սախիջևանի ձևով ապուխտ շինեցի: Ապուխտը չորանալուց հետո բժիշկը քննեց և գտավ, որ բոլոր միկրոբները ջնջվել են: Այսպես իմաց-

վեց, որ ապուխտը վարակ չունի: Նույնիսկ երբ միտը ապխտած կախում ենք, ճանճ չի նստում վրան, այլ մոտենում և հենց որ հոտը առնում է՝ հեռանում է: Ապուխտը շինվելուց հետո էլ ո՛չ ճանճը ծնտով է դնում, ո՛չ ցեց է ընկնում և ո՛չ էլ որդնոտում, ինչքան երկար ժամանակ էլ պահվի: Սրան համաձայն է գալիս թյուրքերի այն կարծիքը, թե տապակած չամանը ոչնչացնում է բոլոր հիվանդությունները: Շատ ամիսներ պահելուց հետո ապուխտը փայտ է կտրում, տախտակ է դառնում, բայց մի օր թաց շորի մեջ պահելուց հետո, կակղում և փափկում է:

Ահա թե ինչպիսի՜ ախտամերժ, անվարակ և չփշացող սնունդ է պատրաստել հայ ժողովուրդը իր տնտեսության համար, որ և գործածում է առնվազն 1.600 տարիե ի վեր:

գ) Քարուկիր

Շինարարական տեսակետից, առանձին կարևորություն ունեն պարսկերեն kargir «ամրութիւն շինուածոյ», քրդերեն kagir «հաստ պատ» (Justi, Dict. Kurde, էջ 323). թյուրքերեն kyargir, գվռ. kyavgir, ռամկերեն քյալկիր «քարաշեն», որոնք փոխառյալ են հայերեն քարուկիր բառից (տե՛ս Մ. Աբրիկյան, բառարան տճկ. հայ. գաղ., էջ 807): Այս բառը կազմված է քար ու կիր բառերից, իբր «քարով ու կրով շինված».

նախնական գործածությունը ունի Մատթեոս Ուտհայեցին. «քարուկրով կալան զդուռն քաղաքին». հետո դարձել է «քարաշեն» (Գիրք Վաստակոց, էջ 30): Նոր Հայկազյան Բառգիրքն ունի քարակիր (տպագրում քարուկիր). հմմտ. Ալաշկերտի և Մուշի գաղուկիր «քարուկիր, քարաշեն»՝ գրեթե նույն կազմությամբ: Հայերենից է կազմված թարգմանաբար՝ վրացերեն քվիր-կիրի «քարուկիր», իսկ պարսկերեն ձևափոխվելով՝ kargir իբր թե կազմված kār «գործ» և gīr «բունք» բառերից, որ «քարաշեն» նշանակություն համար անմիտ է:

Ամենահին ժամանակներից սկսած հայերը իրենց շինարարության մեջ մտցրել են քարուկիր շենքեր: Նույնիսկ այսօր, անտառի մեջ հայ գյուղացին իր տունը շինում է քարից և ոչ թե փայտով: Սրա պատճառը այն է, որ Հայաստանը չափազանց հարուստ է քարով: Իսկ Պարսկաստանը, որ ո՛չ փայտ ունի և ո՛չ քար, տները շինում է հողից: Այսպես էր նաև հին Ասորեստանում և Բաբելոնում, ուր բոլոր շենքերը հողից էին շինված, այնպես որ քաղաքի կործանումից հետո հողը հողի հավասարվելով, ոչինչ չէր մնացել: Մեծն Ալեքսանդրը նվաճելով Ասորեստանը և Բաբելոնը, շատ որոնեց Նինվե քաղաքը, բայց ավերակն էլ չգտավ:

